Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 744 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայկական Կարմիր խաչի ընկերության Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի երկրորդ հարկի միջանցքի վերանորոգում և բնակիչների համար նախատեսված 10 սենյակների կահավորում՝ խնամքի և սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցման միջավայրի բարելավման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ճապոնիայի կառավարություն, Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության միջոցով (քաղ. Երևան, Բաբայան 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1 շենք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	25,800,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի շահառուները՝ տարեց և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձինք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2024 թվականի մարտի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի երկրորդ հարկի միջանցքի վերանորոգում՝ 17,800,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2024 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում.

		2) Գյումրու շուրջօրյա խանմքի կենտրոնի 10 բնակելի սենյակների կահավորում՝ 8,000,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2024 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի երկրորդ հարկի միջանցքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 17,800,000 դրամի չափով. 2) Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի 10 բնակելի սենյակների համար նախատեսված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 8,000,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության ՀԿԽԸ-ի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Նախագիծը ենթարկվելու է փորձաքննության, իրականացվելու է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև հեղինակային հսկողություն: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ